

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մասեաց Աղանույս հեղինակը մօտերս ճանապարհորդութիւնմը ընելու ըլլալով՝ հարկ համարեր էր ամսագրոյս հրատարակումը առ այժմ դադրեցընել, եւ ազգասեր ընկերագրելոց եւ ուսումնասեր ընթերցողաց կողմանէ մինչեւ հիմա տեսած սիրալիր ընդունելութեան համար շնորհակալութիւնը յայտնելէն ետեւ՝ կրխոստանար որ քանի մը ամսէն այս օգտակար աշխատութիւնը նորէն սկսի Աստուծով առաջ տանիլ, ձեռքէն եկած ամենայն ջանքն ընելով որ գրուածքը հետ զհետ շատ աւելի կատարելագործուի, եւ հրատարակումը աւելի ճիշդ ու կանոնաւոր կերպով ըլլայ. այնպէս որ ընթերցողք ալ դիւրաւ մոռնան ոչ միայն առաջին երկու տարուանս մէջ պատանած ակամայ բերութիւնները, այլ եւ այժմու ընդհատութենէն իրենց բարեսէր սիրտերուն բնականաբար զգալու բերել տրտմութիւնը : Սակայն անա կրճանուցանէ ուրախութեամբ որ տարւոյս վերջերը քէ Կոստանդնուպօյսէն, քէ Ռուսաստանէն եւ քէ Հնդկաստանէն եկած բազմաթիւ յորդորական նամակները եւ ազգասեր բաժանորդաց օրէ օր շատնալը ստիպեցին զինքը անընդհատ կերպով հրատարակելու այս աշխատութիւնը նաեւ ուղեւորութեանը ժամանակը, գօրաւոր եւ գլխաւոր օգնական ու շարունակող ունենալով արժանապատիւ . ՄԱՐԿՐԻՍ ԳԵՐԻՍԵՐԸ. անիկայ ալ գանազան ուսումնասիրաց ձեռնառութեանը վստահանալով՝ խմբագրութեան լաւութեանը եւ տպագրութեան ճշդութեանը համար պէտք եղած նոգը եւ հսկողութիւնը ամենայն սիրով յանձն առած է :

Փարիզ, 31 դեկտեմբերի 1856 :

ԳԵՐԻՍԵՐԸ ԳԵՐԻՍԵՐԸ ԱՅԿԱՅՈՂՈՒԹԻ :